Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Պատմություն

Թեմա՝ Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում:

Վերապատրաստող, մենթոր՝ Լաուրա Գրքիկյան

Ուսուցիչ՝ Մարիկա Նիկողոսյան

Գյումրի 2022

Բովանդակություն

1. Ներածություն էջ 3

2. Գլուխ 1 Համագործակցային (ինտերակտիվ) մեթոդների, հնարների դերը ուսուցման կազմակերպման գործընթացում: էջ 4-11

3. Գլուխ 2 Արդի մեթոդների դերը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում: էջ 12 -15

4. Եզրակացություն էջ 16

5. Օգտագործված գրականության ցանկ էջ 17

Ներածություն

Աշխարհն այսօր փոխվում է արագընթաց և անկանխատեսելիորեն։ Տեղեկություններն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը։ Այն, ինչ մի ժամանակ հավերժական էր թվում և անփոփոխ ճշմարտություն, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ սխալ։

Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումները նոր խնդիրներ են դնում ուսուցիչների առաջ։ Որքան էլ գնահատելի ու կիրառելի է անցյալի փորձը, միևնույն է փոփոխություններն անխուսափելի են։[1]

Սույն հետազոտության նպատակն է տարբեր օրինակների միջոցով ընդգծել արդի արդյունավետ մեթոդների ու մոդելների կիրառման անհրաժեշտությունը դասավանդման գործընթացում։

Հետազոտական աշխատանքի **խնդիրն է** առաջարկվող տարբեր մեթոդների, մոդելների ու հնարների միջոցով խթանել ուսուցման արդյունավետ կազմակերպման գործընթացին, որն էլ իր հերթին կնպաստի սովորողների վերլուծական, քննադական և համագործակցային կարողությունների զարգացմանը։

Հետազոտությունը բաղկացած է երկու ենթագլխից։ Առաջին ենթագլուխը վերնագրել ենք «Համագործակցային (ինտերակտիվ) մեթոդների, հնարների դերը ուսուցման կազմակերպման գործընթացում», որտեղ կոնկրետ օրինակներով փորձել ենք առանձնացնել մի շարք մեթոդներ, հնարներ ու մոդելներ , որոնք կօգնեն ուսուցիչներին առավել արդյունավետ կազմակերպել դասապրոցեսը։ Երկրորդ ենթագլխում՝ «Արդի մեթոդների դերը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում» փորձել ենք ենք առանձնացնել մի շարք մեթոդներ, որոնք կօգնեն ավելի հետաքրքիր կազմակերպել առարկայի դասավանդումը։

[1] Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ, Գյումրի, 2018, էջ19։

Գլուխ 1: Համագործակցային (ինտերակտիվ) մեթոդների , հնարների դերը ուսուցման կազմակերպման գործընթացում:

Կրթական փոփոխությունների առաջադրած պահանջները վերաբերում են հանրակրթության կազմակերպման գործընթացներին: Փոխվել են ուսուցման նպատակները, սկզբունքները, կրթության բովանդակությունն ու ուսումնական միջավայրը, մշակվել ու ներդրվել են գնահատման նոր՝ առավել ճկուն ու բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնց իրականացումը պահանջում է ուսումնառության նոր մեթոդների, մոդելների ու տեխնոլոգիաների կիրառում, նոր տիպի՝ համագործակցային ու ինտեգրված դասերի կազմակերպում և այլ: [2]

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Ժամանակակից մանկավարժությունը, որն անվանում են նաև անցումային շրջանի մանկավարժություն, նպատակ ունի մանկավարժական ողջ գործընթացը համապատասխանեցնելու արդի կյանքի պահանջներին, դարձնելու այն առավելագույս աշակերտակենտրոն, չափորոշչահեն և վերջնարդյունքահեն:: Այսօր ուսուցման գործընթացում առավել կարևորվում են ոչ թե ակադեմիական գիտելիքների պաշարը, ինչը անհրածեշտ նախապայման է, այլ այդ գիտելիքները կյանքում կիրառելու , ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, նորը ստեղծելու, համագործակցային և ինքնուրույն որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողությունների և հմտությունների ձևավորումը: [3]

«Մեթոդը» հունարենից փոխառված բառ է և ընդհանուր իմաստով նշանակում է ինչ-որ նպատակի հասնելու, խնդիր լուծելու եղանակ, իրականության տեսական կամ գործնական յուրացման հնարների միագումար, իսկ բառացի թարգմանությամբ ինչ որ տեղ տանող ճանապարհ:[4]

---

[2] Նույն տեղում, էջ 7:

[3] Նույն տեղում, էջ 50:

[4] Դալլաքյան Ն., Դիշաղաջանյան Ա., Սարուխանյան Ս., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վսրժություններ, Վանաձոր, 2008թ, էջ 6:

Արդի մեթոդների նպատակն է զարգացնել սովորողների համագործակցային, քննադատական և ինքնուրույն մտածողությունը։

Մեթոդների ընտրության գործընթացում առավել հետաքրքիր կլինի խաղային բաղադրիչ պարունակող մեթոդների ու հնարների ընտրությունը։ Խաղն ուսուցչի օգնականն է՝ ուսումնական գործունեությունը երեխաների համարհետաքրքրաշարժն հաճելի դարձնելու, նրանց հոգնածությունը և լարվածությունը թուլացնելու , ուշադրությունը կենտրոնացնելու, մտածողությունն ու երևակայությունը զարգացնելու գործում։[5]

Ստորև ներկայացրել ենք նսովորողների հաղորդակցական, սոցիալական փոխազդեցության, համագործակցային, ճանաչողական, երևակայական կարողությունները, ինչպես նաև ինքնուրույն, ստեղծագործական ու քննադատական մտածողության զարգացմանն ուղղված տարբեր մեթոդներն ու հնարները։

ՄՏԱԲԵՐՈՒՄ

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերց է ։ Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը։ Հետաքրքիր է, որ «կրթություն» բառի լատիներեն «Education» համարժեք բառի արմատը՝ «Educe», թարգմանաբար նշանակում է «դուրս բերել»։ Ուսուցման գործընթացում մենք հաճախ կարևորում ենք գիտելիք տալը։ Բայց պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում։[6]

ՊՈՊ ԿՈՐՆ

«Պոպ կորնը» վարժանք է, խմբային աշխատանքի կազմակերպման հետաքրքիր ու ցուցադրական հնար։

Անվանումը անգլերեն ծագում ունի և թարգմանաբար նշանակում է եգիպտացորենի հատիկներ։ Աշխատանքի կազմակերպման այս ձևը արտացոլում է եգիպտացորենի հատիկների պատրաստման գործընթացը, երբ նրանք որոշակի ջերմաստիճանում սկսում են տաքանալ ու անկանոն ճտճտալով վերև թռչել։

---

[5] Բալայան Ա., 100 խաղ դպրոցականների համար, Զանգակ-97, 2006թ, էջ6։

[6] Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ., էջ13։

«Պոպ կորնը» կիրառվում է որևէ հարցի, խնդրի վերաբերյալ սովորողների մտքերը լսելու, հավաքելու, մտքերն ու նրա շուրջ քննարկումը թեժացնելու նպատակով: Արդյունավետ է այն դեպքում, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների , ցուցանիշների թվարկումներ: Ենթադրում է արագությունն արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացումն մասնակիցներիէ իրար հաջորդող ու համաձայնեցված գործողություններ:

Խմբային քննարկումներիի՝ նման ձևով կազմակերպումը ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն ու հետքրքրություն:

ԱՆԿՅՈՒՆՆԵՐ

«Անկյունները» համագործակցային ուսումնառության վարժություն է, որի նպատակը հակասական հարցերի շուրջ բանավեճ ծավալելն է: Այն կարող է հաջորդել վիճահարույց տեքստի ընթերցմանը , ֆիլմի դիտմանը:

1. Մտագրոհի միջոցով պարզել քննարկվող թեմայի վերաբերյալ աշակերտների դիրքորոշումները:
2. Աշակերտներին ժամանակ տալ իրենց ընտրած դիրքորոշման օգտին համոզիչ փաստարկներ ձևակերպելու:
3. Խնդրի վերաբերյալ դրական դիրքորոշում ունեցողները հավաքվում են դասասենյակի մի անկյունում, բացասական դիրքորոշում ունեցողները՝ մյուս անկյունում, իսկ միջանկյալ դիրքորոշում ունեցողները՝ երրորդ անկյունում:
4. Մի քանի րոպեի ընթացքում խմբերը քննարկում են իրենց գրավոր փաստարկները, որոշում են իրենց դիրքորոշումն ամրապնդող ամենահամոզիչ փաստարկները, ընտրում իրենց խոսնակներին, որոնք պետք է ներկայացնեն խմբերի կարծիքները բանավեճի ընթացքում:
5. Յուրաքանչյուր խմբի խոսնակ ներկայացնում է խմբի դիրքորոշումը՝ հիմնավորելով այն:
6. Խոսնակների ներկայացումից հետո խմբի անդամները ևս միանում են քննարկմանը:
7. Քննարկման ընթացքում մասնակիցները կարող են փոխել իրենց կարծիքը և տեղափոխվել այնխումբ, որի փաստարկները ավելի համոզիչ են:

8. Խմբերը պետք է աշխատեն , մտածեն և գտնեն նոր փաստարկներ՝ իրենց տեսակետը հաստատելու և շատ կողմնակիցներ ձեռք բերելու համար։

9. Քննարկումն ավարտելուց հետո խմբերի յուրաքանչյուրը համագումարի է բերում իր դիրքորոշումը և այն հիմնավորող փաստարկները։

- Գրել թեմային առնչվող որևէ առանցքային բառ գրատախտակի կամ թղթի կենտրոնում։
- Մտագրոհի միջոցով գրել այդ բառին առնչվող բառերն ու արտահայտությունները։
- Գաղափարների գրելը ավարտելուց հետո գծիկներով միացնել այն բառերը, որոնք իրար են առնչվում։
- Հնարավորին չափ շատ մտքեր գրել, մինչև դրանք կամ տրված ժամանակը կսպառվի։

Առաջին անգամ այս վարժությունը ներկայացնելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի թեմա, որ խմբի բոլոր անդամներին հոգեհարազատ լինի։Այն մեկ անգամ խմբով կատարելուց հետո աշակերտները այնքան են հմտանում, որ կարողանում են կատարել ինչպես փոքր խմբերով, այնպես էլ անհատական։

ՄՏԱԾԻ՛Ր- ԶՈՒԳՈՐԴԻ՛Ր-ՄՏՔԵՐ ՓՈԽԱՆԱԿԻՐ

Այս վարժությունը արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որը օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել տեքստի շուրջը և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը։ Ուսուցիչը թեմայի շուրջ նախօրոք հարցեր է պատրաստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն (երկակի պատասխան են ենթադրում), և աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները։ Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի պատասխանները (գաղափարները)։ Ապա ուսուցիչը հարցնում է զույգերից մի քանիսին , որոնք ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները։[7]

[7] Դալլաքյան Ն., Դիշաղաջանյան Ա., Սարուխանյան Ս., նշված աշխ. էջ 81-83։

Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել , կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը:

Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքներ լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև:

Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող եք առանձին թղթերի վրա գրել «կռիվ», «պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը:

Պատասխանն է՝ կոնֆլիկտ:

ԳԻՏԵՄ , ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ, ՍՈՎՈՐԵՑԻ

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը:

Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

ՄՏԱԳՐՈՀ

Դեպի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի

վերաբերյալ ։Ընդ որում ՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը։ Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համարպարզ դառնան նաև սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները։ Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված։ Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից։ Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը։ Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն։ Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին։ Պարզապես լրացնում է այն։

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու։ Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը։ Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն։ Երեխաները հասկանում են , որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում։ Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների։[8]

Կենտրոններով աշխատանք

Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր։ Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին։ Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի

[8] Խաչատրյան Ս., նշված աշխ., էջ 22-26։

աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով:

Կենտրոններ

- **Հետազոտողների կենտրոն**
- **Ստեղծագործողների կենտրոն**
- **Գրավոր աշխատանքի կենտրոն**
- **Բացահայտողների կենտրոն**

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը ՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

Բացահայտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հետազոտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահի ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:

Ստեղծագործողների կենտրոն

Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն:

Գրավոր աշխատանքի կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան

ՖՐԱՅԵՐԻ ՄՈԴԵԼԸ

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար։ Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը։ Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ։ Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքրի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկկացությանը։[9]

ԿՌԱՀԻՐ ԲԱՌԸ

Ծածկագրել մեկ գաղտնի բառ (օրնակ՝ Աֆրիկա), հետո գրատախտակին գրել 5 հուշող բառ (օրինակ՝ ջայլամ, Սահարա, Կոնգո, Նյասա, Եգիպտոս)։ Գաղտնի բառի բնորոշումները, որոնք ասվում են աշակերտների կողմից, գրել 5 հուշող բառերի կողքին, որից հետո գուշակել գաղտնի բառը։

Նշանաբառը

Երկու աշակերտից գաղտնի դասարանին հայտնվում է նշաանաբառը (օրինակ՝ Ամերիկա)։ Ապա հուշող բառերի շնորհիվ գուշակվում է նշանաբառը (օրինակ՝ Կոլումբոս, սիգար, ջրվեժ և այլն)։ Երկու աշակերտներից ով առաջինն է գուշակում նշանաբառը , հաղթում է, իսկ մյուսը նստում է։ Նոր նշանաբառ է ընտրվում, և նորից սկսում են գուշակել։

[9] Նույն տեղում, էջ 30-33

Գլուխ 2 : Արդի մեթոդների դերը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում:

Սովորողների մոտ պատմություն առարկայի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու և պատմական ակտիվ մտածողության զարգացման համատեքստում շատ կարևոր է առարկայի դասավանդման ընթացքում հետաքրքիր ու նպատակային մեթոդների կիրառումը:

Որպեսզի սովորողները պատմական մտածողություն ձևավորեն և ոչ թե միայն դրա որոշ հատվածները յուրացնեն, պետք է խրախուսել նրանց ամբողջական պատմական մտածողություն կիրառել: Եթե իսկապես ուզում ենք սովորողների մտածողությունը զարգացնել, ապա պետք է ուսումնառության այնպիսի փորձառություններ ստեղծենք, որ նրանք մտածեն սեփական մտածողության մասին: Սա կօգնի նրանց խորացնել ուսումնասիրվող նյութի և այն ուսումնասիրելու համար կիրառվող գործիքների ընկալումը:[10]

Ստորև ներկայացնում ենք սովորողների պատմական մտածողության զարգացմանն ուղղված մի շարք մեթոդներ :

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏՔԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ

Էքսկուրսիաները հիմնականում ձանձրալի , սովորողների պասիվ մասնակցություն պահանջող գործողություններ են: Դրանց փոխարեն սովորողները կարող են պատմական հետքեր որոնել:

Սա հիանալի միջոց է միջավայրի պատմությունն ուսումնասիրելու, պատմական աղբյուրների հետ աշխատելու, թիմային աշխատանքի հմտություններ ձեռք բերելու համար:

Տարբերակները կարող են լինել բազմազան: Օրինակ՝ Գյումրիում ապրող սովորողները կարող են ուսումնասիրել քաղաքի տարբեր կառույցներ, բնակելի տներ, դիտարկել դրանք տարբեր տեսանկյուններից: 1 Եթե այդ կառույցներում նկարահանվել են հայտնի ֆիլմեր, ապա դրանք կարող են ուսումնասիրել պատմական տեսանկյունից. ե՞րբ ր

[10] Գևորգյան Զ., Մանուկյան Ն.,Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, ինչպե՞ս, Պարադիգմա, 2020թ., էջ 28-29:

ինչպե՞ս են նկարահանվել այդ ֆիլմերը, պատմական ինչպիսի՞ իրադարձություններ և ժամանակներ են դրանք պատկերել, ինչպե՞ս են պատկերել և այլն (օրինակ՝«Եռանկյունի», «Մեր մանկության տանգոն» և այլ ֆիլմեր)։ 2. Կարելի է պատմական տեսանկյունից ուսումնասիրել կառույցների ճարտարապետական լուծումները. ե՞րբ են կառուցվել, տվյալ ժամանակի քաղաքական, տնտեսական, մշակութային իրականությունն ինչպե՞ս է ազդել կառույցների ճարտարապետության վրա և այլն։ Նման կառույցներ, օրինակ՝ հին գործարաններ, կոմբինատներ, սննդի կետեր, փոքրիկ թանգարաններ կարելի է գտնել Հայաստանի գրեթե բոլոր քաղաքաներում և գյուղերում, հետևաբար այսպիսի ուսումնասիրությունները կարող են իրականացվել յուրաքանչյուր վայրում։[11]

ԶԱՐՄԱՆՔ, ԱՆՍՊԱՍԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Երեխաները սիրում են զարմանալ։ Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը։ Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է։

Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը։ Վերջինս ձևակերպվում է պատկերում արտացոլված ոճով։

Օրինակ՝ կարելի է դասի սկզբում հարցնել՝ ի՞նչ կլիներ, եթե 1903թ.-ի հունիսի 12-ի օրենքը Խրիմյան Հայրիկը ընդուներ։ Մեկ այլ տարբերակ է աշակերտների կողմից ուրիշի դեր ստանձնելը։ Օրինակ՝ պատկերացրեք դուք Իսրայել Օրին եք։ Ինչպե՞ս կվարվեիք։[12]

Կենդանի նկարներ

Դասարանը բաժանվում է խմբերի։ Խմբերին հանձնարարվում է դասագրքից ընտրել պատմական որևէ նկար, որը պետք է «կենդանացնեն»։ Խմբերին տրվում է որոշակի ժամանակ՝քննարկումների և փորձի համար։

Յուրաքանչյուր խումբ պետք է այնպես ներկայացնի նկարի բեմադրումը, որ մասնակցեն խմբի բոլոր անդամները։ Նկարների կերպարները «կենդանություն ստանալով»՝ պետք է կատարեն իրենց դերերը և կրկին «անշնչանան, քարանան»՝ ինչպես նկարում է։

[11] Նույն տեղում, էջ 169։
[12] Խաչատրյան Ս., նշված աշխ., էջ 23։

Քանդակագործ

Սովորողները բաժանվում են զույգերի։ Առաջին փուլում զույգերից մեկը «քար է», իսկ մյուսը «քանդակագործ»։ «Քանդակագործը» ընտրում է որևէ պատմական կերպար, օրնակ Ի. Ստալին, Ա. Հիտլեր և այլն և սկսում է «քանդակել» կերպարը։ Հաջորդ փուլում մասնակիցները տեղերով փոխվում են ։

Գտիր տարբերությունը

Որպես դասի լավ սկիզբ կամ բոլորի հետ ընդհանուր աշխատանք՝ կարող եք սովորողներին ներկայացնել 4 տարբեր նկարներ (կամ պնդումներ) և խնդրել նրանց գտնել հիմնավոր տարբերություններ։

Այս մոտեցման ընթացքում ցանկալի է սովորողներին հորդորել՝ մի կողմ թողնել ակնհայտ տարբերությունները և սեփական գիտելիքների օգնությամբ գտնել ավելի բարդ հակադրությունները կամ ընդհանրությունները։

Օրինակ 1. Նապոլեոն Բոնապարտը տարբեր ժամանակներում։

Սովորողներին ներկայացնում եք այնպիսի նկարներ, որտեղ տարբեր ժամանակների հեղինակներ պատկերել են Նապոլեոն Բոնապարտին։ Գործողությունն արդյունավետ է բացահայտելու ժամանակի ընթացքում կարևոր իրադարձության կամ կերպարի հանդեպ միջավայրի, մարդկանց ունեցած ընկալումները, վերաբերմունքի փոփոխությունները՝ այդպիսով համեմատելով տարբեր ժամանակների մշակութային միջավայրերը, արվեստի ընկալումները։

Եթե պատկերները ցուցադրվելու են լուսարձակիչով, օրինակէ Power Point սահիկներով, ապա ուսուցիչը կարող է յուրաքանչյուր նկարը ցուցադրել 10-15 վայրկյան տևողությամբ, իսկ եթե նկարները թղթային տարբերակներով են ցուցադրվելու , ապա սովորողներին կարելի է մինչև 1 րոպե ժամանակ տրամադրել բոլոր նկարների համար։ Սահմանված ժամանակի ընթացքում սովորողները գրի են առնում այն, ինչ նկատում են նկարներում։[13]

[13] Մանուկյան Ն., Գևորգյան Զ., նշված աշխ., էջ 220։

Հրատապ լուրեր

Սովորողներն ընտրում են պատմական որևէ իրադարձություն, որը, ըստ իրենց, կարող է դառնալ հրատապ լուր։ Կարելի է նաև հենց նոր ուսումնասիրած նյութը վերածել հրատապ լուրի։

Ռամավարությունն արդյունավետ է հասկանալու համար, որ պատմական իրադարձությունները կարևոր կամ անկարևոր համարելը հարաբերական է՝ կախված իրադարձությունից և տեսանկյունից։

Հրատապ լուր ստեղծելու համար սովորողներին կարող եք հետևյալ աջակցող հարցերը տալ.

-Ի՞նչ իրադարձություն են ընտրելու և ի՞նչ տեսանկյունից են կարևորելու այն։ Սովորողները կարող են կարևորել ոչ միայն քաղաքական կամ ռազմական , այլև տնտեսական , սոցիալական, մշակութային և այլ բնույթի ցանկացած իրադարձություն։

Ինչպե՞ս են ձևավորելու ու ներկայացնելու հրատապ լուրը, որպեսզի այն ուշադրություն գրավի։ Ինչպիսի՞ վերնագիր, նկար, տեքստ են կազմելու։

Աշխատանքը կարելի կատարել ինչպես անհատական, այնպես էլ խմբերով։ Հրատապ լուրը կարող պատրաստվել օրաթերթի (պաստառի), համացանցային թերթի տեսքով (համակարգչային ծրագրի միջոցով), հնարավորության դեպքում նաև հրատապ լուրի մասին տեսանյութ նկարահանվելով։ [14]

[14] Նույն տեղում, էջ 18

Եզրակացություն

Այսպիսով ամփոփելով մեր կատարած հետազոտական աշխատանքը կարող ենք եզրակացնել, որ նորօրյա մեթոդները , ի տարբերություն ուսուցման կազմակերպման այլ ձևերի ունեն մի շարք առավելություններ: Նախ այն մղում է սովորողին ավելի լավ սովորելու: Բոլորի համար ստեղծվում է բարենպաստ միջավայր, որում նրանք կարողանում են արտահայտել իրենց մտքերն ու դիրքորոշումները:Այս համատեքստում ուսուցման գործընթացը իրական կյանքին առավել մոտ է, մեկ այլ խոսքով ավելի կենդանի է: Այս համոզումը ավելի ամրապնդվեց իմ դասավանդած դասարաններում վերոնշյալ մեթոդների ու հնարների փորձարկման համապատկերում: Ու սա ինքնանպատակ ու սուբյեկտիվ եզրահանգումներ չեն: Սովորողների հետ իրականացված մի շարք քննարկումների ու հետադարձ կապի արդյունքում մեր վերոնշյալ «եզրահանգումների փաթեթը» առավել հստակեցվեց ու վերջնական տեսք ստացավ:

Օգտագործված գրականության ցանկ

1 . Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ, Գյումրի, 2018թ։

2. Բալայան Ա., 100 խաղ դպրոցականների համար, Զանգակ-97, 2006թ։

3. Գևորգյան Զ., Մանուկյան Ն., Գիրք պատմության ուսուցման Ինչու՞, Ինչպե՞ս, Պարադիգմա կրթական հիմնադրամ, 2020թ։

4 . Դալլաքյան Ա., Դիշաղաջանյան Ն., Սարուխանյան Ս., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ։

5. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, , 2020թ։